

ՀԱՆԳԻՍՏ Տ. ԶԻՆՈՎԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՄԱԺՈՒԳԱՅԻ (1896—1985)

Մարտի 8-ին, կյանքի 89-րդ տարում, իր Տեր հանգյավ Թբիլիսիի Ալեքսանդր Նևսկի ռուսաց տաճարի վանահայր Տետրիցխարոյի միտրոպոլիտ Գերաշնորհ Տ. Զինովի Մաժուգան:

Հայոց Հայրապետը և Ս. Էջմիածնի ողջ միաբանությունը ճանաչում էին Տ. Զինովի միտրոպոլիտին որպես սրբակյաց, բարեհոգի և ջերմեռանդ բարի հայր: Նա Հայոց Հայրապետի և Ս. Էջմիածնի մեծ բարեկամն էր:

Տ. Զինովի միտրոպոլիտը, ավագանի անունով՝ Զախարի Աքիմովիչ Մաժուգա, ծնվել է 1896 թվականի սեպտեմբերի 14-ին Ուկրաինայի Գլուխովե քաղաքում, բանվորի ընտանիքում: Մանուկ հասակում կորկվում է ծնողներից: Նա սովորում և ավարտում է տեղի եկեղեցու ծխական ուսումնարանը: 1912 թվականին ընդունվում է Ծնունդ Սուրբ Աստվածածնի անվան Գլինսկի Անապատի վանք՝ Սումսկի մարզում, ուր ունկնդրում է վանական տարբեր դասընթացներ: 1916 թ. վինակոչվում և մասնակցում է առաջին համաշխարհային պատերազմին: 1921 թվականին, զորացրվելուց հետո, վերադառնում է իր նախկին վանք և կուսակրոն է դառնում՝ վերանվանվելով Զինովի:

1922 թվականին գալիս է Կովկաս և ընդունվում Դրանդովսկու Ուսպենսկի (Վերափոխման) վանք, Սուխումի քաղաքի մոտ, ուր և ձեռնադրվում է կիսասարկավագ, իսկ 1925 թվականին՝ աբեղա: 1925—1930 թթ. ծառայում է Սուխումի քաղաքի Ս. Նիկողայոս տաճարում, իսկ 1936 թվականին՝ Դոնի Ռոստով քաղաքի Ս. Սոֆիա եկեղեցում: 1936—1942 թթ. հիվանդության պատճառով ժամանակավորապես չի ծառայում: 1942—1945 թթ. հոգևոր ծառայություն է կատարում Թբիլիսիի Ս. Սիոն Մայր տաճարում և Մցխեթայի Օլգինսկի վանքում, 1945—1947 թթ.՝ Հայաստանի Կիրովո գյուղի Ս. Նիկողայոս եկեղեցու վանահայր, 1947—1950 թթ.՝ Բաթումի Սվյատո-Դուխովսկի եկեղեցու վանահայր, իսկ 1950 թվականից մինչև իր կյանքի վերջը ծառայել է Թբիլիսիի Ալեքսանդր Նևսկի ռուսաց եկեղեցում, որպես վանահայր:

Առ ի գնահատումն իր հոգևոր անբասիր աշխատանքների, Զինովի միտրոպոլիտը իր երկարամյա ծառայությունների ընթացքում ստացել է հոգևոր բազմաթիվ շնորհաբաշխություններ, հոգևոր պարգևատրություններ և շքանշաններ ռուս, վրաց և արտասահմանյան ուղղափառ Եկեղեցիների պետերի կողմից:

Մարտի 14-ն է: Թբիլիսիի Ալեքսանդր Նևսկի եկեղեցին լեցուն է հավատացյալնե-

րի խուռներամ բազմությամբ: Հանգուցյալի հիշատակը հարգելու են եկել նաև Վրացական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի լիազոր պրն. Անզոր Ցիկլաուրին իր աշխատակիցներով:

Առավոտյան ժամը 10-ին սկսվում է ս. պատարագը: Պատարագին ներկա են Համայն Վրաց կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ը, Վրաց Ուղղափառ Եկեղեցու Ս. Սինոդի բարձրաստիճան հոգևորականները, Սիմֆերոպոլի և Ղրիմի արքեպիսկոպոս Լեոնտին:

Ամենայն Հայոց կաթողիկոսի անունից սույն սրբազան պատարագին է մասնակցում Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը՝ Տ. Դավիթ քահանա Զելվեյանի հետ: Վիրահայոց թեմի առաջնորդը այս տխուր առթիվ Համայն Վրաստանի կաթողիկոսին է ներկայացնում Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի ցավակցական հեռագիրը:

Ս. պատարագից հետո, հոգեհանգստյան պաշտամունքի դամբանականից առաջ, Նորին Սրբություն Իլիա Բ-ը ի լուր ժողովրդյան ընթերցում է Հայոց Հայրապետի հեռագիրը:

ԳԵՎՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐԱՅԴԱՐՅԱՆԻՆ

Թբիլիսի, Հայոց Եկեղեցի

Խոր վշտով ընդունեցինք միտրոպոլիտ Զինովիի մահվան լուրը: Այս առիթով ցավում ենք հատկապես, քանի որ կյանքից հեռացավ հոգևոր դասի ևս մի ակնիվ ու իր կոչմանը արժանի ներկայացուցիչ, որն իր ողջ կյանքը նվիրեց ծառայելու Ռուս Պրավոսլավ Եկեղեցուն ու նրա հավատացյալ ժողովրդին: Ի Տեր հանգուցյալ Նորին Սրբազնություն Զինովիի հիշատակը միշտ կմնա մեր սրտերում:

Ս. Էջմիածնում ջերմորեն աղոթում ենք Բարձրյալին՝ հանգուցյալի հոգու հանգըստյան համար, որպեսզի նրա հոգին արժանանա Երկնից Արքայությանը:

«Երանի այնոցիկ, որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն» (Մատթ. Ե 8):

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
13 մարտ 1985 թ.

Հեռագրի ընթերցումից հետո, Համայն Վրաստանի կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ը մեծ հարգանքով և եղբայրական սիրով ու կարոտով խորին շնորհակալություն է հայտնում Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսին ցավակցության համար:

Հանգուցյալ Տ. Զինովի միտրոպոլիտի դիակը ամփոփվում է նույն եկեղեցու աջակողմյան գավթում: Վերջում տրվում է հոգեճաշ:

Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի: